

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատան գյուղական
համայնքի ղեկավար Ա. Գրիգորյանի
2015թ. 1-ին կիսամյակում կատարած աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Տեղական ինքնակառավարման և Հ.Գ.Մ հարցերով վարչության պետ Ա.Ղուկասյանի, համայնքի ավագանու անդամների

16-07-2015թ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, դրանից բխող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքներով, գյուղապետարանի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

2015թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2015թ. 1-ին կիսամյակի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու անձնօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք բարձրագույնի մերկայացնում են Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ, մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման և խմելու ջրի մատակարարմանը, ինչպես նաև կազմակերպվում է աշնանացան հացահատիկի քերտահավաքը:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները.

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:

Համայնքում կան ոչ շատ քանակությամբ չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողերի անեկամտաբերությունը
2. Հողասեփականատերերի բացակայությունը համայնքից
3. Տարիքային պատճառները
4. Ռոտման ջրի բարձր սակագինը:

Ուշադրության կենտրոնում է պահվում անճեղրած քերտի իրացման, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքները: Պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքներ:

Մարզպետարանից համայնքին 2015թ. 1-ին կիսամյակում հատկացվել է 80.0 տոննա ազոտական պարարտանյութ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության ոլորտում՝ ժամանակին կատարվում է բոլոր հակահամաճարաբաշխ միջոցառումները, կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն: Հետևողական և սխտեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 10 առևտրի օբյեկտ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև բնօրենք օգտագործման գործունեություն իրականացնողների ուղղությամբ:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՍՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ: Պատվիրված է և ընթացքի մեջ է համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի կազմման աշխատանքները, այդ նպատակով նախատեսված է բյուջեյից ծախսելու 7.2 մլն. դրամ գումար:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվում է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվում են ճշտված իրավիճակային հատակագծեր:

Միստեմատիկաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:

Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի, ինչպես նաև վարակագրեթման ուղղությամբ:

Միստեմատիկաբար, շաբաթը 2 օր կատարվում է աղբահանություն, այդ նպատակով նախատեսված է համայնքի բյուջեյից 1500.0 հազար դրամ ծախս:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջանակարգ դպրոց:

Աշակերտների թիվը 283:

Աշխատողների թիվը՝ 46-ը, որից՝ ուսուցիչներ՝ 31:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա: Նախադպրոցական խմբի համար համայնքի բյուջեյից տարեկան 2.2 մլն դրամ դրամաշնորհ է հատկացվում խմբի գործունեության պահպանման վրա:

Գյուղապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ «Կանանց տոնի», «Մայրության և գեղեցկության տոնի» առթիվ, ծախսվել է 750.0 հազար դրամ գումար:

Մշակույթի տանը տեղավորված է նաև գրադարանը, որը վերանորոգված և կահավորված է, ունի 11586 կտոր գրականություն: Գրադարանը մշակույթի հետ համատեղ կազմակերպել է տարբեր բնույթի միջոցառումներ, գրական գերակույթներ:

Մեծ ուշադրություն է դարձվում բոլակառույցներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը պատշաճ կազմակերպելու նպատակով:

Կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ հանրապետության տոնի օրվան նվիրված, մշտապես ծաղկեպսակներ է դրվել գոհված ազատամարտիկների գերեզմաններին, հուշարձան համալիրին:

Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացումը, գործում է բնօրենքարտի, կարատեի և մարտեր առանց կանոնների խմբակները:

Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը:

Աջակցություն է ցուցաբերվում համայնքի տանիտարախիզենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը: Վերահսկում է առողջապահական հիմնարկի աշխատանքները:

Բուժ. ամբուլիատորիան կահավորված է ժամանակակից սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա, համայնքը ունի շտապօգնության մեքենա:

Համայնքում գործում է «Ցնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրը քաղաքաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Ի՝ ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան, պարբերաբար դրամական օգնություն է տրվում երկկողմանի և միակողմանի ծնողագուրկ երեխաներին:

Ուշադրության կենտրոնում է գտնվում գոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահովների բնտանիքները, որոնց տրվում է դրամական օգնություն: 1-ին կիսամյակում համայնքի շուրջ 51 սոցիալապես անապահով բնտանիքների, նորածին երեխաների մայրերի և մահացածների բնտանիքների տրվել է դրամական օգնություն 1,8 մլն 22 դրամ:

Համայնքում հաշվառված են ընդամենը՝ 397 բնակատներ, այդ թվում 358 ձեռքբերման և աշխատանքային, 2-ը՝ կերակրող կորցնողի, 37-ը՝ հաշմանդամության: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 83 : Թոշակները և նպաստները ստանում են ժամանակին:

Համայնքում 100% հասանելիություն ունի և գործում է բջջային ԿիվաՄեյլ-USU, Օրանժ և Բիլաին օպերատորները:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը գորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան: 2015թվականի 1-ին կիսամյակում համայնքում կատարվել է հսկայաձև աշխատանքներ:

Փողոցների և դաշտային ճանապարհների փոսալցումների և ընթացիկ վերանորոգման համար ծախսվել է 483.0 հազար դրամ:

Մշակույթի տանը գործում է ժող. երգի-պարի, լատինաամերիկյան պարերի խմբակներ, ինչպես նաև դաշնամուրի, դիզայնի, արևելյան մարտաբանության խմբակներ:

Կատարվել է խմելու ջրագծերի վերանորոգում: Համայնքը գրեթե 61.5%-ով զագֆիկացվել է (426 տնտեսություն):

Համայնքի միջոցներով ձեռք բերված գյուղատնտեսական իր սարքավորումներով օգտագործվում է համայնքի հողօգտագործողների դաշտային աշխատանքները կատարելուն:

Համայնքի տնտեսությունների թիվը՝ 896 բնակչության թիվը 3636 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 1633 մարդ:

Առաջին կիսամյակի ընթացքում համայնքում ծնվել է 16 երեխա, մահացածների թիվը՝ 13:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2015թ. 1-ին կիսամյակում հավաքագրվել է եկամուտներ՝

| N | անվանումը | պլան տարեկան | 2015թ. 1-ին կիսամյակ | | հազար դրամ |
|---|------------------------------------|--------------|----------------------|---------|---------------|
| | | | պլան | փաստացի | կատարողական % |
| 1 | հողի հարկ | 9500.0 | 3500.0 | 2200.8 | 62.9 |
| 2 | գույքահարկ | 5550.0 | 2750.0 | 2065.0 | 75.1 |
| 3 | տեղական տուրքեր | 180.0 | 90.0 | 84.6 | 94.0 |
| 4 | տեղական վճար | 50.0 | 25.0 | - | - |
| 5 | ոչ հարկային եկամուտներ | 2100.0 | 950.0 | 238.6 | 25.1 |
| 6 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 2670.0 | 2670.0 | 2670.0 | - |
| 7 | պետ. բյուջեից տրամադրվող դրուսացիա | 55567.8 | 27766.0 | 27766.0 | 100.0 |
| | ընդամենը վարչական բյուջե | 75617.8 | 37751.0 | 35025.0 | 92.8 |
| 8 | հողի օտարումից մուտքեր | - | - | - | - |
| 9 | տարեկազմի ազատ մնացորդ | 25741.8 | 25741.8 | 25741.8 | - |
| | Ընդամենը | 101359.6 | 63492.8 | 60766.8 | 95.7 |

2015թ. 1-ին կիսամյակում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

| N | ծախսերի անվանումը | պլան տարեկան | 2015թ. 1-ին կիսամյակ | | հազար դրամ |
|----|-------------------------|--------------|----------------------|---------|---------------|
| | | | պլան | փաստացի | կատարողական % |
| 1 | տեղական ինքնակառավարում | 33725.0 | 15500.0 | 12406.9 | 80.0 |
| 2 | Համայնք. այլ ծառ. | 6085.0 | 4581.0 | 3846.5 | 84.0 |
| 3 | աղբահանություն | 1500.0 | 750.0 | 750.0 | 100.0 |
| 4 | մշակույթ և ռադ.հեռ.հաղ. | 16335.9 | 7500.0 | 5394.9 | 71.9 |
| 5 | կրթություն | 2200.0 | 1500.0 | 1300.0 | 86.7 |
| 6 | Արտաքին լուսավորում | 3100.0 | 1500.0 | 928.1 | 61.9 |
| 7 | Սոց. օգնություն | 5000.0 | 2500.0 | 1770.0 | 70.8 |
| 8 | Գյուղատնտեսություն | 3920.0 | 3920.0 | 1407.0 | 35.9 |
| 9 | պահուստային ֆոնդ | 3751.9 | - | - | - |
| 10 | ֆոնդային բյուջե | 25741.8 | 25741.8 | 2089.5 | 8.2 |
| | Ընդամենը | 101359.6 | 63492.8 | 29892.9 | 47.1 |